

բարին» կը կայանայ անոր առարկայական արժէք մը, որպէս նպատակ ունենալուն մէջ:

Շելեր Երեւութաբանութեան (Phenomenology) հետեւորդ մըն էր, սակայն իր կեանքի ու միտքի երկրորդ հանգրուանին ան բոլորովին նուիրուած էր փիլիսոփայական մարդաբանութեան (Anthropology): Բարոյագիտական իր գլխաւոր երկը կը նկատուի 1913 թուականին հրատարակուած՝ «*Ձեւապաշտութիւնը բարոյագիտութեան մէջ եւ նիւթական արժէքի բարոյագիտութիւնը*» (գերմ. բնագիր՝ „Der Formalismus in der Ethik und die materiale Wertethik“): Իսկ Հարտման Նոր-Կանտականութեան Մարբուրգեան դպրոցի հետեւորդ մըն էր, որմէ հեռանալէն ետք կ'որոշէր *հիմնական Էաբանութեան* (Fundamental Ontology) փիլիսոփայական ուղղութիւնը, կեցութեան եւ ճանաչողութեան հանդէպ աւելի առարկայական-իրապաշտական դիրքաւորումով: 1925 թուականին հրատարակուած՝ «*Բարոյագիտութիւն*» (գերմ. բնագիր՝ „Ethik“) երկը կը նկատուի բարոյագիտական իր գլուխ-գործոցը:

➤ 4. Եոնաս

Եոնաս հետեւելով Կանտի *անպայմանական հրամայականին*, նոր բանաձեւ մը գտնէ, իր «*Պատասխանատուութեան սկզբունքը*» (գերմ. բնագիր՝ „Das Prinzip Verantwortung“, 1979 թ.) գլխաւոր երկին մէջ, ուր կը փորձէ բարոյագիտութիւն մը ներկայացնել, մեր տեքնիկական արդի քաղաքակրթութեան համար: Եոնասի բանաձեւն է.- «*Վարուէ՛ այնպէս, որ վարմունքներուդ ազդեցութիւնները տանելի ըլլան, աշխարհի վրայ մարդկութեան տեսականութեան համար*»: Այլ խօսքով, *անպայմանական հրամայական* մը, որով անհատը ապագայ սերունդներուն հանդէպ պատասխանատուութիւն կը ստանձնէ, որ իր տարբեր վարմունքներով չխորտակէ, այլեւ պահպանէ մարդկութեան կայունութիւնն ու տեսականութիւնը:

Ի տարբերութիւն Կանտի պարտագիտական բարոյագիտութեան, Եոնասի մօտ սակայն, կը գերակշռէ *հետեւականութիւն* մը (Consequentialism), որովհետեւ ան, իր բանաձեւով, հետեւանք մը կամ նպատակ մը կը հետապնդէ:

➤ Ե. Հաբերմաս

Հաբերմաս կը քննադատէ Կանտի *անպայմանական հրամայականը*, իր՝ «*Բարոյական գիտակցութիւնը եւ հաղորդակցական վարմունքը*» (1983 թ., գերմ. բնագիր՝ Moralbewusstsein und kommunikatives Handeln) երկին մէջ: Հաբերմասի համաձայն, Կանտի բարոյագիտութեան հիմք կը ծառայէ՝ անհատի «անձնական կանոն»ը (Maxim) եւ այս առնչութեամբ ան փոփոխութիւն մը կ'առաջարկէ, որ գերման փիլիսոփայ Ապելի (Karl-Otto Apel, 1922 – 2017 թ.) եւ իր նոր տեսութիւնն է՝ *քննախօսութեան բարոյագիտութիւնը* (գերմ. Diskurs-ethik, անգլ. Discourse Ethics): Հաբերմասի համաձայն, փոխանակ անհատը, որ պիտի ուզէ՝ իր անձնական կանոնը (Maxim) ընդհանուր բարոյական օրէնք դարձնել, ան հարկ է, որ այդ «մաքսիմ»ը քննախօսական կազմին ներկայացնէ